ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2021, № 3, 52-62 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2021.12.3.052

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՕՎՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ժողովրդավարական իրավական պետության կառուցումը անքակտելիորեն կապված է հասարակական շահերին և բարոյական նորմերին համապատասխան գործելու անհրաժեշտության հետ, որը ուղղակիորեն արտայտվում է հասարակական կարծիքում: Վերջինս՝ որպես հասարակական կյանքի ինքնուրույն տարր, ժողովրդավարության գոյության կարևոր պայմաններից է, ինչու չէ՝ նաև նրա զարգացման ցուցանիշը:

Հոդվածը հետարդիականության համատեսքտում հասարակական կարծիքի գործառնական առանձնահատկությունների մասին է, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել հասարակական կյանքում տիրող խնդիրները և խուսափել հանրային կարծիքի մանիպուլացիայից:

Բանալի բառեր – *հասարակական կարծիք, հասարակություն, մեծամասնության կարծիք, ժողովրդավարություն, հետարդիական հասարակություն, ժողովուրդ, իշխանություն, ազդեցության միջոց, մանիպուլյացիա, սոցիալական եթեր*

Այլևս չկան մեներգիչներ, մնացել է միայն երգչախումբը:
Խ. Օրտեգա ի Գասսետ

Ակնհայտ իրողություն է, որ արդյունաբերական քաղաքակրթությունից տեղեկատվական-ցանցային քաղաքակրթության անցման արդի դարաշրջանում գնալով ընդլայնվում են հասարակական կարծիքի ազդեցության շրջանակները: Մեր օրերում, երբ տեղեկատվական պատերազմները դարձել են քաղաքական և աշխարհաքաղաքական նպատակներին հասնելու ամենաարդյունավետ միջոցներից, երբ «ով տիրում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին» հայտնի բանաձևը այլևս գործնական դրսևորումներ է ստանում, հանրային կյանքի ներքին հուսալիությունն ու համախմբվածությունը ապահովելու, սոցիալական վարքը կառավարելու և ուղղորդելու, արդյունավետությունը բարձրացնելու համար հասարակական առանձին խավերի ու շերտերի տրամադրությունների իմացությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Խճանկարային մեր աշխարհում, երբ «ժողովրդավարության ուժով» յուրաքանչյուր մեկը սեփական, հաճախ իրարամերժ կարծիք ունենալու և այն պաշտպանելու իրավունք ունի, խիստ

կարևորվում է հանրային տրամադրությունների հենքի վրա գերակա հասարակական կարծիք ձևավորելու ու ակտիվացնելու հիմնախնդիրը: Ընդ որում, ժամանակակից հասարակություններում անհրաժեշտ դիրքորոշումներ ձևավորելու և մարդկանց միտքն ու վարքը ուղղորդելու հարցում փաստերի և իրադարձությունների նպատակաուղղված վերլուծությունն ու մատուցումը, որպես կանոն, իրականացվում են քաղաքական բեմականացումների համատեքստում, ինչի արդյունքում հասարակական կարծիքի ձևավորումը վերածվում է մի յուրատեսակ սոցիոմշակութային խաղի, որի ընթացքում տեղեկատվական ցանցերին տիրապետող քաղաքական ուժերին հաջողվում է հասարակական և քաղաքական գործընթացների շուրջ ձևավորել որոշակի մթնոլորտ՝ ապահովելով և վերահսկելով քաղաքական զարգացումների ցանկալի ընթացքը:

Այս իմաստով կարող ենք փաստել, որ հանրային կյանքում հասարակական կարծիքի օրեցօր աճող միտումները և առընթեր իրականության տարբեր կողմերի վրա դրա կողմնորոշիչ գործառույթի մեծացումը տեսական ու գործնական նոր հնչեղություն են հաղորդում այդ երևույթի սոցիալ-փիլիսոփայական իմաստավորման խնդրին, առավել ևս, որ նման մոտեցումը հնարավորություն է տալիս անցյալի միջոցով ընդլայնելու ներկայի սահմանները՝ ըստ այդմ փորձելով կանխատեսել ապագան:

Քաղաքական պայքարի պրակտիկայում հանրային կարծիքի ձևավորման և մարդկանց վարքի ուղղորդման տեխնոլոգիաների կիրառումը թեև այլևս սովորական երևույթ է, բայց և այնպես պահանջում է հանգամանորեն ուսումնասիրել ու հասկանալ, թե տվյալ հասարակության մեջ կամ նրա առանձին սոցիալական շերտերում ինչպես և ինչ գործոնների ազդեցության տակ է այն ձևավորվում և արդյունավետ գործառնում: Այն մի կողմից արտահայտում է արտոնյալ փոքրամասնությունների (քաղաքական և կուսակցական խմբավորումներ) շահերը, մյուս կողմից առավելագույնս համապատասխանում է քաղաքական կյանքին մասնակցելու «ժողովրդավարական» իրավունք ունեցող հասարակ մեծամասնության պատկերացումներին: Տեղին է ասված, որ հասարակական կարծիքի ուժը բոլոր ժամանակներում գոյություն ունեցող ձգողականության համընդհանուր քաղաքական ուժն է[1]: Այս հանգամանքը շատ լավ հասկացել էին դեռևս հին հույները, որոնք այն հաջողությամբ կիրառում էին քաղաքականության և պետական կառավարման մեջ՝ շրջանառության մեջ դնելով «Ժողովրդի ձայն՝ Աստծու ձայն» (Vox populi - Vox dei) հայտնի արտահայտությունը՝ խիստ կարևորելով վերջինիս տեղն ու դերը հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման, ինչպես նաև քաղաքական պայքարի ասպարեզում:

[1] Տե՛ս **Ортега-и-Гассет Х.** “Дегуманизация искусства” и другие работы. Сборник, М., Радуга, 1991, էջ 155:

Մեր ժամանակների համար շատ տեղին է հնչում Հեգելի այն միտքը, որ «հասարակական կարծիքը բոլոր ժամանակներում եղել է մեծ ուժ, և այդպիսին է այն հատկապես հիմա, երբ սուբյեկտիվ ազատությունը ձեռք է բերել նման կարևորություն և նշանակություն: Այն, ինչ նշանակալի պետք է լինի այսօր, նշանակալի է ոչ թե ուժի միջոցով և կամ որպես բարքերի ու սովորույթի հետևանք, այլ առավելապես հասկացման և փաստարկման շնորհիվ»[2]:

Իբրև զանգվածային գիտակցության ձև՝ հանրային կարծիքը մարդկանց վարքը ուղղորդող և կենսադիրքորոշումներ ձևավորող ամենաազդեցիկ ինստիտուտներից մեկն է, մարդկային փոխհարաբերությունները ապահովող և գեներացնող կարևորագույն մեխանիզմն ու ակտիվ խթանիչն է, քանի որ որևէ հասարակական խումբ չի կարող գործառնել առանց ընդհանուր պատկերացումների և դատողությունների մշակման, իրադարձությունների համատեղ գնահատման, խնդիրների լուծման ընդհանուր ուղիների սահմանման: Այս տեսակետից կարող ենք ասել, որ հասարակական կարծիքը հասարակության կյանքում տեղի ունեցող իրադարձությունների և սոցիալական հրատապ խնդիրների, մի խոսքով՝ սոցիալական իրականության վերաբերյալ տարբեր խմբերի և շերտերի դատողությունների ու գնահատականների հանրագումարն է և ինչ-որ իմաստով արտահայտում է տվյալ հասարակության **«սոցիալական եթերի»** բովանդակությունը՝ իրեն բնորոշ կարգավորիչ, ուղղորդիչ, կողմնորոշիչ, կազմակերպչական, վերլուծական և այլ գործառույթներով: Վերջինիս հիմքում ընկած են սոցիալական իրականության մասին հանրային կյանքում տեղ գտած և գործառնող տարաբնույթ նարատիվներ ու այլևայլ պատումներ, որոնք հանդես են գալիս որպես յուրատեսակ **«սոցիալական տեսություններ»**:

Եթե հաշվի առնենք, որ սոցիալական իրականությունն այն է և այնպիսին է, ինչպես և ինչպիսին մարդիկ այն ընկալում և ընդունում են, ապա դժվար չէ համոզվել, որ միևնույն սոցիումում միաժամանակ գործում և գործառնում են տարբեր, հաճախ նաև իրարամերժ սոցիալական իրականություններ, որոնցից յուրաքանչյուրի գոյության հիմնավորումը բխում է տվյալ սոցիալական շերտի շահերն արտահայտող արժեքային միջուկի առանձնահատկությունից, և որոնցից յուրաքանչյուրում այդ արժեքային միջուկը նպաստում է «մենքի» ձևավորմանն ու ներխմբային փոխհարաբերությունների առաջացմանը՝ դառնալով միևնույն «սոցիալական տեսությանը» հարող մարդկանց ընդհարական կարծիք: Այս իմաստով հանրային կյանքում հասարակական կարծիքը իրականությունը մեկնաբանող, ընդունող կամ մերժող այնպիսի «սոցիալական տեսություն» է, որի հիմքում ընկած արժեքային հարացույցի բովանդակությունը նաև կանխորոշում է նրա գործառնական ծան-

[2] **Гегель Г. Ф**. Философия права. М., Мысль, 1990, с. 352.

բաբեռնվածությունն ու ազդեցության շրջանակները։

Ի դեպ, թեև քաղաքական պայքարի և հանրային կյանքի արդյունավետ կառավարման համատեքստում հասարակական կարծիքի ինստիտուտի դերը գնալով մեծանում է, և մասնագիտական բազմաթիվ հետազոտություններում անդրադառնում են քննարկվող հիմախնդրի սոցիալ-փիլիսոփայական, սոցիոմշակութային և սոցիալ-հոգեբանական տեսանկյուններին, սակայն մեզանում այն դեռևս չի դարձել գիտական լուրջ հետազոտության խնդիր, ինչը, մասնավորապես, գիտական ավանդույթների բացակայության հետևանք է։ Եղած հրապարակումներն էլ առավելապես հրապարակախոսական բնույթի են։ Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ հետխորհրդային գրեթե բոլոր անցումային հասարակություններում, այդ թվում նաև մեզանում, ի սկզբանե ձևավորվեցին իշխող փոքրամասնության արտոնյալ համակարգեր, որոնց հիմքում ընկած էր էլիտարիզմի սկզբունքը։ Այն մասնավորապես ելնում է այն կանխավարկածից, որ «գիտակից ու կազմակերպված քաղաքական փոքրամասնությունը» արմատական բարեփոխումների փուլում կարող է նաև հաշվի չառնել «պահպանողական մեծամասնության» (ժողովրդի) կարծիքը, քանի որ սոցիալ-տնտեսական ծանր վիճակում հայտնված մարդկային այդ «զանգվածը» չի կարող օբյեկտիվ գնահատել արմատական փոխակերպումների պատմական նշանակությունն ու հեռանկարը։ Մինչդեռ տեսական ուսումնասիրությունները հնարավորություն կտային ոչ միայն բացահայտելու և հասկանալու հասարակական կարծիքի ազդեցության մեխանիզմներն ու դրանցից օգտվելու հնարավորությունները, այլև անհրաժեշտ դեպքերում խուսափելու այնպիսի մանիպուլյատիվ ազդեցություններից, որոնք կազմալուծող հետևանք են ունենում հանրային կյանքում կայունության և համախմբվածության ամենօրյա «արտադրության» վրա։ Բանն այն է, որ հանրային կարծիքի ուժով առաջ քաշված խնդիրները մեծամասամբ ենթարկվում են քաղաքական շահերին, և այդ պատճառով այն հաճախ դառնում է քաղաքական գործունեության մանիպուլյատիվ գործիք։

Քաղաքական և օրենսդրական գործընթացներում անմիջական ներգրավվածություն չունեցող բնակչության մեծամասնության սոցիալական ակտիվությունը դրսևորվում է հանրային կարծիքում՝ որոշակի գործողություններ և արարքներ զանգվածային հավանության արժանացնելու, քննադատելու, դատապարտելու կամ մերժելու միջոցով։ Որքան համախմբված ու բազմաքանակ է այդ հանրույթը, այնքան ավելի ազդեցիկ և արդյունավետ է դառնում հասարակական կարծիքը։ Հարկ է նկատել, սակայն, որ թեև հասարակական կարծիքի գլխավոր գործառույթներից մեկը տեղին ու ժամանակին հանրային շահի բարձրաձայնումն է, բայց ժամանակակից անհատակենտրոն ու խճանկարային մեր աշխարհում նրա հիմնական գործառույթը ասես դարձել է

անհատների իրական կարծիքների հանրագումարի գոյությունը հաստատելու տպավորության ստեղծումը և ինչու չէ՝ նաև նրա բեմականացումը և բոլորի անունից հանդես գալու դերակատարումը[3]: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ տվյալ երևույթի արժեքավորությունը արդեն ոչ թե սխալ կամ ճիշտ լինելն է այլ «տվյալ պահին այն կիսող անհատների թիվը»[4]: Սա ևս խնդիր է, որի անտեսումը կարող է նվազեցնել իրական պատկերը ավելի պարզորոշ տեսնելու հնարավորությունը:

Ինչպես արդեն նշեցինք, հասարակական կարծիքի ֆենոմենի հետազոտման խնդիրը գիտական նոր հնչեղություն է ձեռք բերել հետարդիականության (պոստմոդեռնիստական) հասարակությունների զարգացման համատեքստում, քանի որ այն ապրածի, դեպի անցյալը գնացողի բացասում է: Այն նաև աշխարհի մոդեռնիստական մոդելի, նախկին կենսակերպի մերժումն է և անցումը դեպի «ռիզոմատիկ», «նոմադոլոգիական» (քոչվորական) (Ժ. Դելյոզ, Ֆ. Գվատտարի) գոյության[5]: Հետարդիականությունը ճգնաժամային աշխարհընկալում է: Նրան բնորոշ են մի շարք սոցիալ-հոգեբանական սիմուլյակրներ, որոնցից մեկն էլ, ի դեպ, հենց պատրանքային իրականության մասին հասարակական կարծիքն է, ինչպես նաև տագնապի զգացումը, միակերպ ու միասնական աշխարհի մայրամուտը՝ նորի, մեկ ուրիշի գոյության հնարավորությամբ: Այն, ինչ նախկին, ավանդական հասարակություններում ընկալվում էր որպես քաոս ու անկարգություն, հետարդիական հասարակություններում վերաճել է մարդկային ունակությունների իրացման, ինքնադրսևորման և ինքնահաստատման հնարավորության, ինչն էլ իր հերթին ժամանակակից աշխարհը դարձրել է հնարավորությունների խճանկարային մի բնապատկեր, որտեղ ամեն ինչ ասես ենթարկված է «արագ ժամանակի» տրամաբանությանը: Քաղաքակրթական ու սոցիոմշակութային այս նոր իրողություններում անկայունությունը, անորոշությունը, բազմանշանակությունը այլևս դիտարկում են որպես համակարգի կենսունակության պայման և նշան: Սոցիալական մի իրողություն, որտեղ բանականությունն ու ռացիոնալ ինքնաանդրադարձումը ասես փոխարինվել են բարոյական ու գեղագիտական գիտակցությամբ և զգացմունքային ապրումակցմամբ: Զգացմունքային և գեղագիտական կողմնորոշումները ձեռք են բերել ավելի մեծ նշանակություն: Նվազել է ընդհանրացումներ անելու միտումը, ձևախեղվել տեղեկատվական հոսքի յուրացման էկզիստենցիալ կարողությունը: Սրանով նաև կարող ենք բացատրել ներկայումս հայաստանյան իրականության մեջ միասնական գաղափարախոսության բացակայությունը և հանրային կողմնորոշումներում զգացմունքային ե-

[3] Տե՛ս **Бодрийар Ж.** Символический обмен и смерть. М., 2009, էջ 136-137:
[4] **Тард Г.** Общественное мнение и толпа. М., 2015, с. 71.
[5] Տե՛ս **Делез Ж.** Различие и повторение**.** Санкт-Петербург, 1998, էջ 255:

բանգավորումների առկայությունն ու ուժգնությունը:

Հետարդիականության այս նոր իրողություններում աշխարհի փիլիսոփայական պատկերը բնութագրող հայեցակարգերը ասես այլևս չեն «տեղավորվում» օբյեկտիվ ռեալության, ամբողջականության, պատճառականության, ազգի, պետության, ընտանիքի և նման այլ երեվույթների մասին դասական փիլիսոփայության հիմնարար կատեգորիաների շրջանակներում: Ձևավորվել է հպանցիկ ու հարափոփոխ մի տարօրինակ իրականություն, որտեղ մարդը ոչ թե բաժանում է տարածությունը, այլ ինքն է տարրալուծվում տարածության մեջ, և որտեղ երբեմնի միատարր հասարակական երևույթները (ազգային, տարածքային և այլն) աստիճանաբար փոխակերպվում են անհատներից կազմված զանգվածային միավորումների: Ավելին, այս ամենը կատարվում է արտադրական գործընթացների ապամարդկայնացման, աշխատանքի արդյունքներից օտարման, ազատական-ժողովրդական սկզբունքների ներմուծման, կրթված «էլիտայի» ղեկավար դիրքերի թուլացման, տեղեկատվական հոսքերի մեծացման, կրթության չափորոշիչների փոփոխման, հոգևոր և մշակութային գործունեության համաշխարհայնացման գործընթացների համատեքստում, որտեղ հետարդիական մարդը նաև բացարձակ ազատ է ընդունելու կամ մերժելու մշակույթն ու քաղաքակրթությունը: Իսպանացի փիլիսոփա Խ. Օրտեգա ի Գասետն «Արվեստի ապամարդկայնացումը» աշխատության մեջ արվեստում ի հայտ եկող արմատական ու խորքային փոփոխությունների մասին գրում է. «Եթե նախկինում գեղարվեստը ձգտում էր իրականությունը ներկայացնել այնպիսին, ինչպիսին այն կա՝ բնական, մարդկային, ապա նոր գեղարվեստը, հակառակը, ջանում է բացառել արվեստից մարդկային տարրը»[6]:

Հավելենք նաև, որ հետարդյունաբերական արդի հասարակություններում, անձնական ազատությունների ընդլայմանը զուգընթաց, խորանում են մարդկանց անապահովության զգացումները, անկումային տրամադրությունները, միասնական կենսադիրքորոշումների ու երկարաժամկետ ծրագրերի փոխարեն առաջին պլան են մղվում միջին տևողության ծրագրեր ու տեսլականներ, և, որ առավել ուշագրավ ու մտահոգիչ է, ուրվագծվում են ազգային ու անհատական ինքնությունների և իսկության կորստի վտանգավոր միտումներ: Կյանքը վերածվում է խաղի, որը մարդը վայելում է իր ողջ բազմաձևության մեջ՝ օգտվելով հասարակության տրամադրած բարիքներից և ծառայություններից: Այս ամենի հետևանքով հանրային կյանքում փոփոխության է ենթարկվում նաև հասարակական կարծիքի դերը, բարդանում են գործառույթները, ընդարձակվում է ազդեցության ոլորտը, աճում են վերջինս կրողների իրավասությունները, ինչպես նաև ավելանում են նրա ա-

[6] Տե՛ս **Отега-и-Гассет** Х., նշվ. աշխ., էջ 500:

ռարկան հանդիսացող խնդիրներն ու հարցերը: Հանրային կարծիքը հանդես է գալիս ոչ թե որպես տեղի ունեցող իրադարձությունների փորձագետ, այլ որպես մասնակից: Եվ այնքանով, որքանով տեղի ունեցող զանգվածային գործընթացները կառավարելի են, այդքանով էլ վերահսկելի է նաև հանրային կարծիքը: Այն այլևս ոչ թե հասարակական տրամադրություններ, գաղափարներ արտացոլող պարզ հայելի է, այլ մարդկային բազմություններ համախմբող, պատրանքներ, կուռքեր և նախասիրություններ ձևավորող գործոն, զանգվածային գործողությունների արդարացման կամ դատապարտման գործիք, սոցիալական նոր իրականություն կերտելու միջոց: Կարող ենք ասել, որ այսօր մենք հիմնականում գործ ունենք հանրային կարծիքի կեղծանմանակի հետ, որը շատ հմտորեն վերահսկում և ուղղորդում է հասարակական կյանքն իրեն ցանկալի հունով: Դա թերևս պայմանավորված է այն բանով, որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող հասարակական կարծիքը և վերջինիս ինչ–ինչ ուժերի կողմից կյանքի կոչված նմանակը շատ հաճախ իրենց հուզող հարցերում, բայց ոչ նպատակներում համընկնում են: Հասարակական կարծիքի մասին խոսելիս միշտ ներկայացվում են զանգվածային հարցումների արդյունքները, որոնց օբյեկտիվությունն այնքան էլ հավատ չի ներշնչում: Պատահական չէ, որ ֆրանսիացի հայտնի սոցիոլոգ Պիեռ Բուրդիեն անվստահություն է հայտնում մասնագիտական գրականության մեջ հասարակական կարծիքի վերաբերյալ որոշ վերլուծությունների ու մեկնաբանությունների առնչությամբ՝ համարելով, որ հասարակական կարծիքը գոյություն չունի այնպես, ինչպես այն պատկերացնում են, քանի որ բոլորին տրվող միևնույն հարցը թաքնված պարունակում է խնդրի վերաբերյալ համաձայնության վարկած, ինչպես նաև կանխորոշված պատասխան[7]:

Ուսումնասիրելով հանրային կարծիքի ձևավորման և մանիպուլյատիվ մեխանիզմների ու կարծրատիպերի հետ դրա կապը՝ հարց է առաջանում, թե որքանով է հնարավոր **օբյեկտիվ ու անկախ հասարակական կարծիքի** գոյությունը: Բանն այն է, որ համացանցի, զանգվածային լրատվամիջոցների և տեղեկատվական այլևայլ միջոցների շնորհիվ հասարակական կարծիքը դարձել է հիպերիրական քաղաքական սուբստանց, քանի որ իրական միջանձնային հարաբերությունները փոխարինվել են անձի և տեխնիկայի միջև հարաբերությունների, մարդու և էկրանի շփման: Համացանցը և ԶԼՄ-ներն են այն կապող օղակները, որոնք մարդկային գիտակցության մեջ ստեղծում են տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ պատկերներ, ուղղորդում, պատմում և հուշում, **թե ինչի մասին է անհրաժեշտ մտածել**: Այսինքն՝ «թատրոնի» հասարակության մեջ մարդը այլևս չի ընկալում իրականությունը՝ ելնելով հասարակական և անձնական հարաբերություններից, գի-

[7] Տե՛ս **Бурдье П**. Социальное пространство: поля и практики. М., СПб., 2005, էջ 272:

տելիքներից և փորձից: Վ. Լիպմանը, ուսումնասիրելով հասարակական կարծիքի և կարծրատիպերի միջև փոխհարաբերությունները, հանգել է այն եզրակացության, որ ԶԼՄ-ների զգալի մասնակցության պատճառով շատ հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը վերածվում է կարծրատիպի: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ժամանակակից աշխարհում իրար հետ կենսական կարևոր հարաբերություններով կապված մարդիկ գտնվում են միմյանցից մեծ հեռավորության վրա: Նրանք ժամանակ և հնարավորություն էլ չունեն ավելի մոտիկից միմյանց հետ հարաբերվելու: Այդ պատճառով, դիմացինի վարքագծում նկատելով իրենց ծանոթ տեսակին նման հատկանիշ, նրա մասին տեղեկության բացակայությունը լրացնում են սեփական գիտակցության մեջ եղած կարծրատիպերով[8]:

Լինելով ավելի ազատ, քան նախորդ սոցիոմշակութային տարածության մեջ ապրող «ավանդական մարդը»՝ այսպես կոչված «հետարդիականության մարդը» չի էլ նկատում, թե ինչպես է իր անսահմանափակ ազատությունը վերածվում ինքն իրենից ազատության, ինչը ոչ միայն ինքնության և նույնականության ճգնաժամեր է հարուցում, այլև փոխում է կյանքի ոճը, «այստեղ ու հիմա» ամեն ինչ ունենալու պահանջմունքը դարձնում կենսաձև և, որ առավել հատկանշական է, կազմակերպված հասարակությունը վերածում զանգվածային հասարակության՝ կազմաքանդող մի երևույթ, ինչի հետևանքով նույնքան զանգվածային են դառնում ցինիզմի, սկեպտիցիզմի, քամահրանքի և նմանատիպ այլ երևույթները:

Զանգվածային հասարակության համար բնութագրական է հարմարվողականության աննախադեպ աճը: Զանգվածը, ինչպես նկատել է Խ. Օրտեգա ի Գասսետը, կարող է լինել և՛ ամբոխը, և՛ անհատապես «միջին»[9] մարդը, ով իրեն ոչնչով չի տարբերում մյուսներից: Պատմության լծակները փոխանցվել են «միջին» մարդուն, որը դարձել է պատմության իրական սուբյեկտը: Վտանգված է այն մարդու գոյությունը, ով չի մտածում այնպես, ինչպես բոլորը, ինչպես զանգվածը: Եթե նախկինում պատմական գործընթացների սուբյեկտը «անհատն» էր, որն ապրող էր, ապա հիմա այն «զանգվածն» է, որը իրականացնում է սպառման գործառույթ: «Քաղաքացիները գնալով նմանվել և հավասարվել են միմյանց, որը առաջացրել է անվստահություն միմյանց նկատմամբ և միաժամանակ անսահման վստահություն հանրության կարծիքի նկատմամբ, քանի որ նրանց հավասար ճանաչողական ունակություններից հետևում է մեծամասնության ճշմարիտ լինելը»[10]: «Լինել այնպիսին, ինչպիսին բոլորն են» դարձել է հասարակական մազոխիզմի մի ձև, որը, հնարավորինս հեշտացնելով շատերի կյանքը,

---

[8] Տե՛ս **Уолтер Липман**, Общественное мнение. М., 2004, էջ 114:

[9] Տե՛ս **Отега-и-Гассет Х.**, նշվ. աշխ., էջ 44:

[10] **Токвиль А.** Демократия в Америке. М., Прогресс, 1992, с. 196.

նրանց ազատում է անձնական պատասխանատվությունից, բարոյական ընտրության դժվարությունից: Դառնալով զանգվածային գործընթացների մասնակից՝ հետարդիական մարդը անձնական պատասխանատվությունը դնում է բոլորի վրա՝ դրանով ստեղծելով ապահովության պատրանք ինչպես իր, այնպես էլ մնացածի համար: Այս կապակցությամբ Է. Նոել-Նոյմանը իր «լռության պարույրի» տեսության մեջ նկատում է, որ վիճահարույց հարցերի շուրջ մարդիկ սովորաբար հակված են չբարձրաձայնելու մեծամասնությանը հակասող և փոքրամասնության կարծիքը պաշտպանող իրենց անձնական կարծիքը: Եթե մարդը չունի որոշակի խնդրի վերաբերյալ իր սեփական կարծիքը, ապա նա հակված է միանալու մեծամասնության կարծիքին կամ հրապարակայնորեն արտահայտված կարծիքին: Է. Նոել-Նոյմանը «լռության պարույրը» որակում է որպես արձագանք հանրային հավանությանը[11]: Ըստ այդմ նա եզրակացնում է, որ հասարակությունը մեծամասնությունից հրաժարված անհատներին սպառնում է մեկուսացմամբ, որը ծնում է վախ: Այդ վախից դրդված՝ նրանք մշտապես փորձում են գնահատել կարծիքների եղանակը, որի արդյունքում էլ նրանք նախապատվություն են տալիս կամահայտնության բացակայությանը կամ լռությանը: Արդյունքում մեծամասնությունն իրեն ավելի մեծ է կարծում, քան իրականում կա, և փոքրամասնությունն էլ՝ ավելի փոքր:

Տեղափոխվելով մեր իրականություն՝ դժվար է չհամաձայնվել այն մտքին, որ մեր երկրում «կյանքի նվազագույն-անհրաժեշտ պահանջմունքների դիկտատուրայի կապանքներում հայտնված մարդկանց մեծ մասի մեջ վաղ թե ուշ ձևավորվում է երկրի գործերին «չմասնակցելու էթիկա» և «չմասնակցելու քաղաքականություն»»[12]:

Ի տարբերություն մեր ապրած արդեն ծանոթ աշխարհի՝ ներկան լրիվ այլ աշխարհ է՝ անծանոթ, անհասկանալի, անորոշ, մի տեսակ ուրիշ, մի տեսակ օտար: Մեր աչքի առջև քանդվում են սովորականը, կայունը, ավանդականը, փոխարենը անսպասելիորեն, տարերայնորեն, ինքնաբուխ ծագում են անհայտը, ուրիշը, օտարը: Այս ամենին զուգահեռ՝ մենք չենք ցանկանում տեսնել ակնհայտը, այն, որ վերջին տասնամյակը մենք ապրում ենք մշտական հեղափոխական իրավիճակներում: Հեղափոխությունը դարձել է մեր հասարակության կենսաձևը, նրա նորմալ վիճակը: Ավելի հաճախ են ազդարարում ժողովրդավարական հասարակության հաստատման փաստը, բայց մենք չենք կարող դատել հասարակական-քաղաքական գործընթացների և նրանց արդյունքների մասին՝ ելնելով նրանց գեղեցիկ «պիտակներից»: Հայտնի իրողություն է, որ ժամանակակից ժողովրդավարությունը կառավարման այնպիսի ձև է, երբ իշխանությունը պատասխանատու է քա-

[11] Տե՛ս **Ноэль-Нойман Э. Н.** Общественное мнение. Открытие спирали молчания, М., 1996, էջ 103:

[12] **Է. Ա. Հարությունյան,** Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 94:

ղաքացիների առաջ իր գործողությունների համար, իսկ քաղաքացիներն իրացնում են իրենց շահերն իրենց իսկ ընտրած ներկայացուցիչների միջոցով վերջիններիս մրցակցության և համագործակցության պայմաններում[13]: Այսօր ժողովրդավարություն ասելով հասկանում ենք ազատ ընտրություններ, խոսքի և մամուլի ազատություն, իրավահավասարություն, խմբային որոշումներ կայացնելու գործում մասնակիցների հավասար մասնակցություն: Որքան քիչ է կարևորություն տրվում առանձին մարդկանց կարծիքներին, այնքան ուժեղանում է հասարակական կարծիքի ազդեցությունը անհատների հայացքների վրա: Եթե նախկինում մարդիկ դատողություններ էին անում՝ հենվելով բարոյական նորմերի, կրոնական պատվիրանների, պետության օրենքների, ավանդույթների վրա, ապա ժամանակակից աշխարհում դրանք կորցնում են իրենց կողմնորոշիչ և ուղղորդիչ նշանակությունը և իրենց տեղը զիջում են հանրային կարծիքին: Առանց հասարակության մեջ ծագող միտումների վերլուծության, ըմբռնման և հանրային կյանքում դրանց արտացոլման հնարավոր չէ որևէ լուրջ քաղաքականություն: Պետք է հստակ հասկանալ հասարակության տարբեր շերտերի, խմբերի շահերի հակասությունները, քանզի դրանց առճակատման գործընթացում է գործառնում հանրային կարծիքը: Այն, որպես հասարակական կյանքի ինքնուրույն տարր, ժողովրդավարության գոյության կարևոր պայմաններից է, ինչու չէ՝ նաև նրա զարգացման ցուցանիշը: Վերջինիս բազմակողմանի ուսումնասիրությունը թույլ կտա հասկանալ, թե որքանով է բնակչությունն ի վիճակի անդրադարձնել հասարակական խնդիրները: Հակառակ դեպքում մենք ականատես կլինենք, թե ինչպես են հանրային կարծիքի մանիպուլացմանն և վերլուծությանն ուղղված գործողությունները վերածվում մասնագիտության՝ այն դարձնելով սոցիալական նոր տարածություն, գուցե նաև շուկա, որը ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ ձեռք կբերի ինքնավար քաղաքական կեցություն: Չէ՞ որ, կախված խնդրի քաղաքական բնույթից և մասշտաբայնությունից, այն կարող է կատարել ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական գործառույթ:

ОВСАННА НАГАПЕТЯН – ***Особенности функционирования общественного мнения в контексте постмодернизма.*** – Построение демократического государства, управляемого верховенством закона, неразрывно связано с необходимостью действовать в соответствии с общественными интересами и моральными нормами, что напрямую отражается в общественном мнении. Последнее как самостоятельный элемент общественной жизни – одно из условий существования демократии, показатель ее развития.

В статье рассматриваются особенности функционирования общественного мнения в контексте постмодернизма, изучение которых позволяет выявить проблемы в общественной жизни, избежать манипулирования общественным мнением.

[13] Տե՛ս **Карл Т. Л., Шмиттер Ф**. Что есть демократия? // http://www.politnauka.org/library/dem/karl-shmitter.php

Ключевые слова: *общественное мнение, общество, мнение большинства, демократия, постмодернистское общество, люди, власть, средства воздействия, манипуляции, социальный эфир*

OVSANNA NAHAPETYAN – *Features of the Functioning of Public Opinion in the Context of Postmodernism.* – Building a democratic state governed by the rule of law is inextricably linked with the need to act in accordance with public interests and moral norms, which is directly reflected in public opinion. The latter, as an independent element of social life, is one of the possible conditions for the existence of democracy as well as an indicator of its development.

The article examines the features of the functioning of public opinion in the context of postmodernism, the study of which makes it possible to identify problems in public life, avoid manipulating public opinion.

Key words: *public opinion, society, majority opinion, democracy, postmodern society, people, power, means of influence, manipulation, social broadcast*